ՆԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-045-06.03.2019,03.05.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 52-րդ կետով՝ «52) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 եւ 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ~~ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-045-06.03.2019-ՏՀ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ~~ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 52-րդ կետով՝ «52) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 եւ 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը:»:

Հոդված 2. ~~Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 52-րդ կետը:~~ ***Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:***

~~Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:~~

~~Հոդված 4. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Փաստաթղթային կոդ՝ Կ-045-06.03.2019, 03.05.2019-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանել <<և փոփոխություն>> բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-4-րդ հոդվածներ	1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 52-րդ կետով, մինչդեռ նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 52-րդ կետը: Այդ առումով նախագծի 2-րդ հոդվածի դրույթներն անհրաժեշտ է վերանայել՝ ճիշտ նշելով օրենսգրքի համապատասխան հոդվածի կետը, որը նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել: Սույն դիտողությունը բխում է	Ընդունվել է	Ընդունվել է

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից, ըստ որոնց՝ նորմատիվ իրավական ակտերում բացառվում են ներքին հակասությունները: 2. Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետներն անհրաժեշտ է միավորել և նախատեսել մեկ հոդվածի տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջները:		